ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ

Պ-172-23.02.2022-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի .

1) 9-րդ մասում «գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների» բառերից հետո լրացնել «, ոռոգման նպատակով մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների» բառերը,

2) 11-րդ մասում «գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն-ների» բառերից հետո լրացնել «, ոռոգման նպատակով մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների» բառերը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

~~Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-185 հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասում «ձկնաբուծական արհեստական լճակների» բառերից հետո լրացնել «, ոռոգման նպատակով ջրավազանների» բառերը:~~

Հոդված 1.

1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասում «գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսությունների» բառերից հետո լրացնել «, ոռոգման նպատակով մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների» բառերը,

2. 11-րդ մասում «գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն-ների» բառերից հետո լրացնել «, ոռոգման նպատակով մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների)» բառերը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ>> ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ *Պ-172-23.02.2022-ՏՏԳՇ-011/1* ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ կառավարություն*	Հոդված 1	***Հոդված 1.*** 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ մասում «գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսու-թյունների» բառերից հետո լրացնել «, ոռոգման նպատակով մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների» բառերը, 2. 11-րդ մասում «գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն-ների» բառերից հետո լրացնել «, ոռոգման նպատակով մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների)» բառերը:»:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է